նի բոլոր ժողովուրդների ազատատենչ, դեմոկրատական տարրերի նպատակակէտն է, եւ որովհետեւ նրանք այդ եւ մի շարք ուրիշ խնդիրներում օրգանապէս կապուած են իրար հետ, ապա ուրեմն միանգամայն հասկանալի է, որ այդ տարրերը համաձայնութեան պիտի գան իրար հետ, իրենց անխտիր ամէնի էլ կապուած ազատութիւնը ձեռք բերելու խնդրում: Եւ այսպէս, Միացեալ Հայաստանին պիտի նախորդէ Ազատ Հայաստանը:

Անազատ ժողովուրդը ընդունակ չէ ազգաւաւաքման: Եւ սակայն դրա համար նա պէտք է լինի ոչ միայն ազատ, այլ եւ՝ անկախ:

VIII

1920–21-ին Հայաստանը կորցրեց իր ազատութիւնը, կորցրեց իր անկախութիւնը, ինչպէս նաեւ հնարաւորութիւնը՝ ստեղծելու ազգային եւ հողային միութիւն: Այդ ամէնի իրականացումը թէեւ չվերացաւ առայժմ, բայց մեծապէս դժուարացաւ, երկարաձգուեց շատ:

Եւ ինչպէս որ, ստեղծուած պայմաններում, դիւրին եւ կարճ ժամանակուան խնդիր չէ Միացեալ եւ ազատ Հայաստանի իրականացումը, թերեւս առաւել եւս դժուարին է նրա կատարեալ անկախութեան վերականգնումը:

Ցամառօրէն հետապնդելով հանդերձ մեր ազգային քաղաքականութեան հիմնական նպատակները, մենք պարտաւոր ենք հաշուի առնել իրական պայմանները, մեզ շրջապատող բոլոր ոյժերը:

Հարկաւ, իւրաքանչիւր մի ազգ ինքն է, իր ներքին բովանդակ կարողութիւններով, գլխաւոր ազդակը սեփական քաղաքականութեան, բայց նրանից դուրս եւ յաճախ նրանից ուժեղ ուրիշ ազդակներ եւս կան, որ յաճախ խաչաձեւել կարող են այդ ձգտումները, եւ որ անկարող են հաշուի չառնել մանաւանդ անազատ, հպատակ ժողովուրդները:

Եւ մենք իրաւունք չունինք միամիտ լինելու ու պատրանք սնուցանելու, թէ այո՛, բոլշեւիկեան դիքտատուրան տապալուելուց կամ վերանալուց յետոյ պէտք է դիւրութեամբ ձեռք բերենք ոչ միայն մեր ազատութիւնը, այլ եւ մեր անկախութիւնը:

Գաղտնիք չէ հարկաւ, որ ոչ միայն ռուս միապետականները, այլ եւ ռուս դեմոկրատ խմբակցութիւնը, անգամ ընկերվարականներից շատերը բնաւ հակամէտ չեն՝ Հայաստանին վերադարձնելու իր անկախութիւնը: Վերապետական, կատարելապէս դերիշխան Հայաստան, դա հանդուրժելի չէ կարող լինել Ռուսաստանի ապագայ ուեէ իշխանութեան համար:

Այդ մենք գիտենք ու չգիտնալը առնուազն անիրատեսութիւն պիտի լինէր մեր կողմից: Անկարելի է չտեսնել, միւս կողմից, տարբերութիւնը վերը յիշատակուած ռուս տարրերի մէջ: Այսպէս, ռուս միապետականները իշխանութեան գլուխ գալով ոչ միայն պիտի հիմքում ժխտեն Հայաստանի անկախութեան ամէն մի իրաւունք, այլ եւ բոլշեւիկեան դաժանութեամբ պիտի շարունակեն ճնշել Հայաստանի ազատութիւնը:

Ահա թէ ինչու, կրկնակ տեսակէտներով, անընդունելի են մեզ համար ռուս միապետականների նկրտումները: Նրանք ոչ միայն կը շարունակեն կապտել մեր ժողովուրդի ազատութիւնը, այլ եւ մէջտեղից կը վերացնեն մինչեւ իսկ ինքնուրոյնութեան այն փշրանքները, որ այսօր— լինի դիքտատուրայի պայմաններում — դեռ բաժին են մնացած մեր երկրին ու ժողովուրդին:

Քաղաքական–ազգային խնդիրներում միապետականները կը դերազանցեն բոլշեւիկներին իրենց ճնշումներով, քաղաքացիական խնդիրներում շարունակելով հանդերձ ընթանալ վերջիններիս դծած ճամբայով:

Այդ տեսակէտից բնաւ անհեթեթ չէ հընչում «ցար» Կիրիլլի դերման մի թերթում հրատարակած «հրովարտակի» ծրագրային այն խօսքը թէ՝ ապագայ Ռուսաստանը պիտի լինի խորհրդային միապետութիւն: Այսինքն՝ բոլշեւիկների ստեղծած Խորհուրդները (սովէտները) պիտի մնան ինչպէս որ կան ներկայիս, միայն թէ նրանց գլուխը պիտի կանգնի ինքը, ապագայ ցարը: Ուրիշ խօսքով՝ Սթալին եւ Սթալինները Կիրիլլով ու Կիրիլլներով պիտի փոխարինուին, առանց ձեռք տալու Խորհրդային վարչակարգի միջուկին:

Եւ այս — ինչպէս նաեւ մի շարք ուրիշ —